Ծուշանիկ Կուրղինյան

Երկրի երգերից

Հիվանդ, հոգնած, լի ցավերով,
Երկիրը լուռ, անբարբառ,
Վեր էր նայում թաց աչքերով
Ջինջ երկնքին լուսավառ:

Տանջված օրվա զրկանքներից՝
Չկար հանգիստ աչքերում,
Նրա կարծր, սևցած դեմքին
Վիշտ էր սողում-գալարվում:

Եվ մշտական խարույկ սրտի
Խորքերիցը խոլական,
Անվերջ լացի, հառաչանքի
Ձայն էր գալիս դիվական:

Նախանձում էր հեռու հեռու
Ձգված անհուն եթերին՝
Որ ցոլում էր մանուկ հոգու
Խաղաղ փայլը շրթերին:

Եվ բնության այդ անարդար,
Անգութ գործից վշտացած,
Տրտնջում էր իր անփարատ

Վշտից սիրտը լճացած:

«Չէիր փայլել՝ թե վշտերիս
Լինեիր գեթ ցավակից,
Կամ բարձունքից վայր նայելիս
Սիրտդ բախեր գթալից . . .

Կապույտ դեմքդ ալ կը հագներ
Անվերջ ծորող արյունից,
Լուսին, աստղեր վայր կը թափվեր
Խեղդված աղի արցունքից . . .»:

1906 թ